

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կիբեռանվտանգության մասին» ՀՕ-442-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 04.01.2026թ.) «Հանրային տեղեկությունների մասին» ՀՕ-443-Ն (ընդունված՝ 04.12.2025., ուժի մեջ՝ 04.01.2026թ.) «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» ՀՕ-444-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.) և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

- Այսուհետ, կիբեռանվտանգության ոլորտը օրենսդրական կարգավորման դաշտում է: Օրենքով սահմանվել են մի շարք հասկացություններ՝ կիբեռանվտանգություն, կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք, կենսական նշանակության ոլորտ, ծառայություն մատուցող, կիբեռմիջադեպ և այլն:
- Օրենքի իմաստով կենսական նշանակության ոլորտներն են՝ էներգետիկայի ոլորտը, արտադրության ոլորտը (քիմիական, սննդամթերքի, զենքի և զինամթերքի, բժշկական, էլեկտրական, համակարգչային, էլեկտրոնային և օպտիկական սարքերի արտադրության), տրանսպորտային ոլորտը, կապի, այդ թվում՝ հեռահաղորդակցության ոլորտը, ֆինանսական ծառայությունների ոլորտը, և այլն:
- Օրենքի գործողությունը տարածվում է՝
 1. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք գործունեություն են ծավալում վերը նշված կենսական նշանակության ոլորտներից մեկում կամ մի քանիսում միաժամանակ և, շահագործում են տեղեկատվական համակարգ կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք.
 2. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վրա:
- Օրենքը չի տարածվում գերփոքր և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգման չափանիշները բավարարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա, բացառությամբ՝ երբ նշված անձինք շահագործում են կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք:

- Վերը նշված սուբյեկտներն օրենքի իմաստով համարվում են ծառայություն մատուցող, որոնց պարտականությունն է անընդհատ ռեժիմով (շաբաթը 7 օր, 24 ժամ) ձեռնարկել կազմակերպչական, տեխնիկական միջոցներ՝
 1. կիբեռսպառնալիքները հայտնաբերելու և կառավարելու.
 2. կիբեռմիջադեպը կանխելու, հայտնաբերելու, արգելափակելու, լուծելու.
 3. տեղեկատվական համակարգերի և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների անխափան գործունեության ապահովման նպատակով ռիսկերը կառավարելու, կիբեռմիջադեպի հետևանքները նվազագույնի հասցնելու կամ այլ ածանցյալ ազդեցությունները կանխելու համար:
- Ծառայություն մատուցողը պարտավոր է ունենալ կիբեռանվտանգության ապահովման ներքին կանոնակարգ, նշանակել կիբեռանվտանգության մասնագետ(ներ) և իրականացնել օրենքով նախատեսված այլ գործողություններ:
- Նաև նախատեսվում է, որ ծառայություն մատուցողը պարտավոր է կիբեռմիջադեպի մասին իրեն հայտնի դառնալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, Ինքնավար մարմնին ծանուցել կիբեռմիջադեպի մասին:
- Սահմանվել է նաև, որ ծառայություն մատուցողները, որոնք շահագործում են կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներ, և կիբեռանվտանգության ապահովման ծառայություն մատուցողներն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 24-ամսյա ժամկետում, Ինքնավար մարմին են ներկայացնում կիբեռանվտանգության ոլորտում միջազգային կամ ազգային ստանդարտով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ:
- Նախատեսվում են նաև Ինքնավար մարմնի օրինական պահանջները չկատարելու հետևանքները և օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը՝ քրեական կամ վարչական պատասխանատվության ձևով:

- Բացի այդ, սահմանվել է կիբեռանվտանգության աուդիտ իրանացնելու մասին կարգավորում. ծառայություն մատուցողը պարտավոր է 3 տարին մեկ անցնել կիբեռանվտանգության աուդիտ, եթե կիրառելի միջազգային ստանդարտով կամ ազգային ստանդարտով այլ ժամկետ սահմանված չէ: Աուդիտի հաշվետվությունն ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում այն ներկայացվում է Ինքնավար մարմին: Միաժամանակ, Ինքնավար մարմինը օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է ծառայություն մատուցողների գործունեության մշտադիտարկում:
- «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը կարգավորում է հանրությանը և յուրաքանչյուր անձի թվային անվտանգ միջավայրում կամ բաց տեղեկությունների քաղաքականություն իրականացնելու միջոցով արդյունավետ ծառայություններ մատուցելու հետ կապված հարաբերությունները, ապահովում է հանրային հսկողություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պարտականությունների կատարման նկատմամբ, սահմանում հանրային տեղեկությունների հասանելիություն ապահովելու, ամպային տիրույթում տեղակայելու, այդ տեղեկությունների նկատմամբ հսկողություն, իրականացնելու եղանակները:
- «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքը կարգավորում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի գործունեության կարգը, իրավասությունների, վերահսկողության շրջանակը և լիազորությունները:

«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին CO-459-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 25.12.2025թ.)

- Օրենսդրությամբ կարգավորվում են առողջության համընդհանուր ապահովագրության հետ կապված հարաբերությունները: Առողջության համընդհանուր ապահովագրությունը օրենքի համաձայն իրականացվող միջոցառումների համախումբն է, որն ապահովագրական դեպքը տեղի ունենալու պարագայում (բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին դիմելը, կամ դեղեր ձեռք բերելու նպատակով՝ դեղատուն դիմելը) ապահովագրված անձին երաշխավորում է ապահովագրական փաթեթում ներառվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների կամ դեղերի տրամադրման դիմաց ամբողջությամբ կամ մասնակի հատուցումը:

- Նախատեսվում է, որ առողջության համընդհանուր ապահովագրության ենթակա են ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ-ում բնակվելու իրավունք (օրենքով նախատեսված կացության կարգավիճակ ունեցող) ունեցող օտարերկրացիները, որոնք ընդգրկված են օրենքով սահմանված խմբերում, այդ թվում՝
 1. վարձու աշխատողներ, որոնց աշխատավարձը հաշվարկում է հարկային գործակալը կամ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուն,
 2. ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերեր, նոտարներ,
 3. ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ռոյալթի ստացող ֆիզիկական անձինք, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք, ինչպես նաև վարձու աշխատողներ, որոնց աշխատավարձը հաշվարկում է հարկային գործակալ չհանդիսացող անձանց կողմից,
 4. ՀՀ քաղաքացի, ռեզիդենտ և մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք,
 5. ՀՀ քաղաքացի, ռեզիդենտ և 65 ու բարձր տարիքի անձինք, ինչպես նաև օրենքով սահմանված այլ խմբերին պատկանող անձինք:
- Առողջության համընդհանուր ապահովագրավճարի դրույքաչափը մեկ անձի հաշվով կազմում է տարեկան 129 600 դրամ, որը ամսվա համար կազմում է 10 800 դրամ:
- Օրենսդրական փաթեթով նախատեսվում է նաև ՀՀ հարկային օրենսգրքում կատարել փոփոխություններ, ինչի արդյունքում սահմանվել է, որ՝
 1. շահույթահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով որպես գործատու հանդես գալու դեպքում ծախս են համարվելու նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված՝ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ֆիզիկական անձանց կամ նրանց փոխկապակցված անձանց համար (օգտին) կատարվող ապահովագրավճարները,
 2. եկամտային հարկով հարկման առումով ֆիզիկական անձանց համար նվազեցվող եկամուտ են համարվելու նաև գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների համար «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված՝ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ֆիզիկական անձանց կամ նրանց փոխկապակցված անձանց համար (օգտին) կատարվող ապահովագրավճարները:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-415-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Փոփոխություններով նախատեսվում է, որ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծանուցումն իրականացվում է անհատական ծանուցումը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրելու միջոցով: Ծանուցումը տեղադրելը, անձի կողմից համակարգի անձնական էջ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում են էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման մասին տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տեղեկացվում է նաև իր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով: Եթե ծանուցումը տեղադրվելուց 3 օր հետո բացակայում է անձնական էջ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով:
- Ընդ որում, իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու օրվանից, իսկ հրապարակային ծանուցման դեպքում՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցումը տեղադրվելու օրվանից հետո՝ 5-երորդ օրը:
- Ֆիզիկական անձանց ծանուցման վերաբերյալ նախատեսվում է, որ եթե ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելուց 3 օր հետո բացակայում է ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումը «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով պատվիրված նամակով ուղարկվում է անձի հաշվառման հասցեով: Փոստային պատվիրված նամակը ուղարկվելուց 7 օր հետո, եթե բացակայում է նամակը հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստումը, այդ թվում՝ երբ ֆիզիկական անձը հրաժարվում է փոստային պատվիրված նամակն ստանալուց, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով:
- Փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության, ՀՀ վարչական դատավարության, և մի շարք այլ օրենքներում՝ նախատեսելով վերոնշյալ փոփոխությունների համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցումների իրականացման հնարավորություն:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-487-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար մինչև 2026թ. հունվարի 1-ը սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնության կիրառման ժամկետը երկարաձգվել է, այսպես՝
 1. ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումն ազատվում է ԱԱՀ-ից մինչև 2026թ. հունվարի 31-ը,
 2. իսկ 2026թ. փետրվարի 1-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ վերոնշյալ արտոնությունը կկիրառվի միայն այն տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք թողարկվել են 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

«ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-413-Ն, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-414-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 24.12.2025թ.)

- Նախատեսվում է, որ բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության մասնակցությամբ՝ կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրերը կամ անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի խառը պայմանագրերը կարող են կնքվել առանց նոտարական վավերացման, եթե դրանք շարադրված են Կառավարության հաստատած նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան և կնքվել են Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակում:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-405-Ն (ընդունված՝ 16.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է շարքային կազմի համար 18 ամիս: Կարգավորումը չի տարածվում 2026 թ. հունվարի 1-ի դրությամբ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների վրա:

«Ռիելթորական գործունեության մասին» օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ անելու մասին ՀՕ-387-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.06.2027թ.)

- «Ռիելթորական գործունեության մասին» օրենքը կարգավորելու է ռիելթորական գործունեության իրականացման կարգը և պայմանները, դրան առնչվող հարաբերությունները: Ռիելթորական գործունեություն է համարվում ռիելթորական ծառայությունների մատուցման գործունեությունը: Ռիելթորական ծառայություններ են համարվում՝
 1. անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների օտարման, վարձակալության հետ կապված գործարքների կնքման համար իրականացվող միջնորդավորված ծառայությունները,
 2. անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների աճուրդների և մրցույթների կազմակերպումը,
 3. անշարժ գույքի կառավարումը:
- Նախատեսվել է, որ ռիելթորական գործունեությունն իրականացվում է լիազոր մարմնում հաշվառված ռիելթորական կազմակերպության կողմից՝ որակավորման վկայական ունեցող և լիազոր մարմնում հաշվառված ռիելթորների միջոցով կամ անհատ ձեռնարկատեր ռիելթորի կողմից:
- Իսկ անշարժ գույքի կառավարման ծառայություն է համարվում կառավարչի միջոցով՝ պայմանագրով սահմանված որոշակի ժամկետում անշարժ գույքի հատուցելի շահագործման հետ կապված ծառայությունների մատուցումը, գույքի կառավարումից ստացված եկամուտների փոխանցումը սեփականատիրոջը, գույքի գովազդումն անշարժ գույքի կառավարման շրջանակում, գույքի վերանորոգումը և գույքի պահպանման իրականացումն ի շահ գույքի սեփականատիրոջ, բացառությամբ կառուցապատման:
- Սահմանվել է նաև, որ լիազոր մարմնի կողմից ներդրվում է առցանց գործող վճարովի միասնական տեղեկատվական համակարգ, որն ապահովում է անշարժ գույքի վաճառքի կայքերի հետ փոխգործելիություն, և որտեղ մուտքագրվում են անձանց սեփականության իրավունքով պատկանող, օտարման առարկա հանդիսացող, ինչպես նաև ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման առարկա հանդիսացող անշարժ գույքերի վերաբերյալ տվյալներ, գործարքների և պատվիրատուի վերաբերյալ տեղեկատվություն: Համակարգի օգտատերերն են ֆիզիկական և իրավաբանական անձինք, ռիելթորական և անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները, ռիելթորները և անշարժ գույքի կառավարիչները:

- Միասնական տեղեկատվական համակարգ պարտադիր մուտքագրման ենթակա են:
 1. ռիելթորական կամ անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրերը,
 2. անշարժ գույքի կառավարման շրջանակում կառավարչի կնքած պայմանագրերը, այդ թվում՝ նշված պայմանագրերի առարկա հանդիսացող անշարժ գույքերի նույնականացման տվյալները (հասցեն, կադաստրային ծածկագիրը, մակերեսը), օտարման, վարձակալության կամ շահագործման գնի, ծառայություններ մատուցողի, պատվիրատուի վերաբերյալ տեղեկությունները հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցեն և պայմանագրի տվյալները՝ կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, գործողության ժամկետը:
- Ընդ որում, պարտադիր մուտքագրման ենթակա պայմանագրերը և տվյալները միասնական տեղեկատվական համակարգ սահմանված կարգով և ժամկետներում չմուտքագրելը հանգեցնում է ռիելթորական կամ անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման, ինչպես նաև անշարժ գույքի կառավարման շրջանակում անշարժ գույքի կառավարչի կնքած պայմանագրերի անվավերության: Նման պայմանագրերն առ ոչինչ են:
- Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքն ինքնուրույն օտարելու նպատակով վճարովի հիմունքներով միասնական տեղեկատվական համակարգ են մուտքագրում օտարվող գույքի նույնականացնող տվյալները, օտարման գինը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ իրավաբանական անձինք նաև՝ անվանումը, ՀՎՀՀ-ն:
- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվել են միասնական տեղեկատվական համակարգում տվյալների մուտքագրման համար պետական տուրքի դրույքաչափեր:
- Տեղեկությունների մուտքագրման հիմք է պատվիրատուի հետ կնքված ռիելթորական կամ անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի օտարման դեպքում՝ այդ գույքն օտարելու մտադրությունը:
- Տվյալները մուտքագրելուց հետո լիազոր մարմինն իրականացնում է մուտքագրված տվյալների ստուգում՝ ըստ պետական գրանցման միասնական մատյանում գրանցված և մուտքագրման պահին առկա տվյալների և կադաստրային քարտեզի, որից հետո մուտքագրված տվյալներն ստանում են «Ստուգված է» կարգավիճակը: Մուտքագրված տվյալները մուտքագրման պահին առկա տվյալներին և կադաստրային քարտեզի տվյալներին համապատասխանելու դեպքում ստանում են «Հաստատված է» կարգավիճակը:

- Համակարգ մուտքագրված գործարքի կամ անշարժ գույքի շահագործման գնի վերաբերյալ տեղեկության փոփոխությունները կարող են իրականացվել միայն պատվիրատուի գրավոր համաձայնության հիման վրա, որը ստանալու պարտականությունը կրում է ռիելթորական կամ անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցող անձը:
- Ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն փոփոխելու սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի օտարման գնի վերաբերյալ տվյալները: Համակարգում առկա անշարժ գույքն օտարվելիս, վարձակալության հանձնվելիս համակարգն ինքնաշխատ հեռացնում է այդ գույքի վերաբերյալ տեղադրված տվյալները:
- Սահմանվել է նաև ռիելթորի մասնագիտական որակավորման կազմակերպում, որը իրականացնում է լիազոր մարմինը՝ որակավորման քննությունների միջոցով, իսկ ռիելթորի որակավորման վկայականը տրվում է 5 տարի ժամկետով:
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում կատարված փոփոխություններին համապատասխան՝
 1. ռիելթորական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակում կնքված գործարքների, ինչպես նաև գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օտարման գործարքների հիման վրա ձեռք բերված իրավունքների պետական գրանցման համար ներկայացվում է նաև միասնական տեղեկատվական համակարգից քաղվածք,
 2. անշարժ գույքի կառավարման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, բացառությամբ անշարժ գույքի կառավարման պայմանագրի շրջանակում անշարժ գույքի կառավարչի կնքած պայմանագրերի, որոնցից ծագող ռիսկերը կրում են պայմանագրի կողմերը,
 3. անշարժ գույքի կառավարման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են դադարեցման կառավարման կազմակերպությանը, կառավարչին հաշվառումից հանելու դեպքում՝ կառավարման պայմանագրի պատվիրատուի իրավունքների դադարման պետական գրանցում կատարելու դիմումի հիման վրա:
- «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում կատարված փոփոխություններով նախատեսվել է, որ ռիելթորական ծառայությունների մատուցման վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով իսկ գույքի կառավարումից ստացված եկամուտների փոխանցումը սեփականատիրոջը նույնպես իրականացվում է անկանխիկ ձևով:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանվել են պատասխանատվության միջոցներ ռիելթորական օրենսդրության մի շարք դրույթներ խախտելու համար:
- ՀՀ հարկային օրենսգրքով կատարված փոփոխություններին համապատասխան՝
 1. անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի կառավարման հանձնման գործարքներից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված այդ գործարքներից ստացվող եկամուտների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով,
 2. ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցողները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ,
 3. հարկային օրենսդրության կիրառման իմաստով անշարժ գույքի սեփականատեր ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն չի համարվելու օրենքով սահմանված կարգով անշարժ գույքը կառավարման հանձնելը:
- Փոփոխություններն ուժի մեջ են մտնելու 2027 թվականի հունիսի 1-ից.
 1. միասնական տեղեկատվական համակարգի հետ անշարժ գույքի վաճառքի կայքերի փոխգործելիության կարգը Կառավարության կողմից սահմանվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, անշարժ գույքի վաճառքի փոխգործելի կայքերում առկա անշարժ գույքի վաճառքի վերաբերյալ տվյալները անշարժ գույքի սեփականատերերն անձամբ կամ նոտարական կարգով վավերացված և միասնական տեղեկատվական համակարգի կողմից ստուգված լիազորագրի հիմքով լիազորված անձի միջոցով օրենքով սահմանված կարգով մուտքագրում են միասնական տեղեկատվական համակարգ,
 2. անշարժ գույքի վաճառքի կայքերը վերոնշյալ ժամկետում պարտավոր են ապահովել իրենց կայքերում հրապարակված հայտարարությունների տարանջատումը՝ ըստ «Ստուգված է» կարգավիճակ ունենալու և չունենալու:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-386-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 19.12.2025թ.)

- «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածի 15-րդ մասով ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերին դասվող պողպատե ամրանների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի 29-ապատիկի փոխարեն սահմանվել է բազային տուրքի 45-ապատիկի չափով:

«ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-395-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 10.12.2025թ.), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-396-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.07.2026թ.)

- Սահմանվել է, որ սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերևակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում կարող է իրականացվել միայն ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունների առկայության դեպքում: Արգելվում է սահմանային շերտում սահմանային գետերի հունից ավազի արդյունահանումը:
- Ընդերքօգտագործողի կողմից սահմանային շերտում սահմանային գետի հունից ավազի արդյունահանման դեպքում՝
 1. ընդերքօգտագործողի գործունեությունը կասեցվում է մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործով կայացված որոշման անբողոքարկելի դառնալը (տեսչական մարմնի որոշումն սահմանվել է որպես անհապաղ կատարման ենթակա),
 2. եթե դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել է, ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է և պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:
- Ընդերքօգտագործողների համար սահմանվել են նոր պարտականություններ՝
- սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնել բացառապես GPS համակարգով կահավորված և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված հանութաբարձիչ և հանութափոխարիչ տեխնիկական միջոցներով, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլներով,
- վերահսկել և ապահովել GPS համակարգով կահավորված տեխնիկական միջոցների և բեռնատարների տեղաշարժի անխափան արձանագրման գործընթացը,
- համապատասխան ծառայություն մատուցող անձի հետ կնքել պայմանագիր՝ տեխնիկական միջոցները և բեռնատարները GPS համակարգով կահավորելու, դրանց տեղաշարժն արձանագրող համապատասխան սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու և տեղեկատվությունը դրանց հասանելիության իրավունք ունեցող մարմիններին տրամադրելու ծառայության մասին,

- պայմանագրում ծառայություն մատուցող անձի համար սահմանել պարտականություն՝ տեխնիկական միջոցների և բեռնատարների տեղաշարժի արձանագրման մասին մինչև 1 տարվա վաղեմությամբ տեղեկատվությունը պահպանելու և հարցման դեպքում այդ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմիններին տրամադրելու մասին:
- Նշված կարգավորումների կիրարկումն ապահովող իրավական ակտերը Կառավարությունն ընդունում է օրենքն ընդունվելուց հետո՝ 8 ամսվա ընթացքում: Այդ ակտերն ընդունվելուց հետո 90-օրյա ժամկետում, ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել վերոնշյալ պարտականությունների կատարումը:
- Այն դեպքում, երբ ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում երկրորդ անգամ հայտնաբերվում է, որ սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացվում են GPS համակարգով չկահավորված կամ այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան չմիացված տեխնիկական միջոցներով կամ չմիացված բեռնատարներով, ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է և պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:
- Նաև, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանվել են նոր պատասխանատվության միջոցներ՝
 1. սահմանային շերտում սահմանային գետի հունից ավազ արդյունահանելն առաջացնում է տուգանք՝ 20,0 միլիոն դրամի չափով,
 2. սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի պաշարների արդյունահանման աշխատանքները GPS համակարգով չկահավորված կամ այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան չմիացված տեխնիկական միջոցներով կամ բեռնատարներով տեղափոխելն առաջացնում է տուգանք՝ 5,0 միլիոն դրամի չափով
 3. օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը սահմանված կարգին համապատասխան չներկայացնելն առաջացնում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով:
- Բացի այդ, ՎԻՎ օրենսգրքով 01.07.2026թ.-ից նաև կխստացվեն ընդերքօգտագործման կանոնները խախտելու համար որոշ պատասխանատվության միջոցները:

«Կրիպտոակտիվների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-515-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 30.12.2025թ.), «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-516-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)*

- 2025 թվականի հուլիսի 4-ից ուժի մեջ մտած «Կրիպտոակտիվների մասին» օրենքի համաձայն կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը ենթակա է լիցենզավորման ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Օրենքի 94-րդ հոդվածը նախատեսում է անցումային ժամանակահատված այն իրավաբանական անձանց համար, ովքեր օրենքն ուժի մեջ մտնելու օրվա (04.07.2025թ.) դրությամբ մատուցել են կրիպտոակտիվներով ծառայություններ: Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց լիցենզավորումը կարգավորող ենթաօրենսդրական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, վերը նշված անձինք պետք է գրանցվեն և լիցենզավորվեն Կենտրոնական բանկի կողմից՝ որպես կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ: Միևնույն ժամանակ, «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ին, կրիպտոակտիվներով գործարքները կարող են իրականացվել միայն անկանխիկ եղանակով:
- Վերոնշյալ կարգավորումների կիրառման ժամանակային անհամապատասխանությունը առաջացնում էր խնդիրներ անցումային ժամանակահատվածում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց համար: Փաստացի ստացվում էր իրավիճակ, երբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք դեռևս չեն գրանցվել և լիցենզավորվել Կենտրոնական բանկի կողմից, սակայն բոլոր գործարքները պետք է իրականացվեն անկանխիկ եղանակով:
- Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով փոփոխությամբ անցումային ժամանակահատվածում թույլատրվում է կրիպտոակտիվներով կանխիկ գործարքների կատարումը՝ պայմանով, որ գործարքի գումարը չի գերազանցում 300 հազար դրամը և անկախ գործարքի գումարից՝ ծառայություններ մատուցող անձն իրականացնում է հաճախորդի պատշաճ նույնականացում, ինչպես նաև վարում է նշված գործարքների վերաբերյալ պատշաճ հաշվառում:

- Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկը պետք է ունենա իրավասություն՝ իրականացնելու վերահսկողություն հաճախորդների նույնականացման եւ գործարքների վերաբերյալ գրանցումների պահանջների պահպանման նկատմամբ: Փոփոխությամբ նախատեսվում է, որ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է նաև մերժել դիմորդի գրանցումն ու լիցենզավորումը կամ կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի տրամադրումը, եթե չի բավարարվում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանած ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Նաև նախատեսվում է, որ Կենտրոնական բանկը կարող է թողարկողին պարտադրել հրավիրել աուդիտ իրականացնող անձի՝ պահուստային ակտիվների անկախ աուդիտ իրականացնելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-488-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 08.01.2026թ.)

- Նախատեսվում է, որ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և այդ պայմանագրերում իրականացվող փոփոխությունները և լրացումները ենթակա են նախնական գնահատման պետական լիազորված մարմնի կողմից և կարող են կնքվել պետական լիազորված մարմնի նախնական գնահատման առկայության դեպքում:

ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-505-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 30.12.2025թ.), «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-506-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 08.01.2026թ.)

- Հնարավորություն կընձեռվի համայնքի և պետական սեփականություն հանդիսացող հողերի վաճառքն իրականացնել էլեկտրոնային աճուրդով, բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նախատեսվում է, որ աճուրդը կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ կառավարության սահմանած կարգին համապատասխան:

*17.12.25թ. ՀՕ-516-Ն օրենքով նախատեսված փոփոխությունը հնարավոր չի եղել կատարել «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-395-Ն օրենքում 6.1-ին հոդվածի բացակայության պատճառով, չնայած որ ՀՕ-516-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվն է 01.01.2026թ.:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-489-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 30.12.2025թ.)

- Օրենքով ևս մեկ հնարավորություն կտրվի մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվառել առկա ինքնակամ կառույցները:
- Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցների վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը հաշվառման նպատակով Կադաստրի կոմիտե ներկայացված չլինելու և 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված լինելու դեպքում հաշվառման նպատակով Կառավարության որոշմամբ սահմանված կարգով դրանց վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են Կադաստրի կոմիտե՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը: Իսկ պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա առկա ինքնակամ կառույցները անկախ 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված լինելու հանգամանքից՝ դրանց վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են Կադաստրի կոմիտե՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
- Նաև, նախատեսվում է, որ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի ծավալում առկա ինքնակամ կառույցների հաշվառման նպատակով Կադաստրի կոմիտե մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներկայացվում են լուսանկարներ, որակավորված անձի տված եզրակացություն, տվյալ գույքի սեփականատիրոջ՝ 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված կառուցման տարբերակի վերաբերյալ տված գրավոր հայտարարություն, ինչպես նաև Կառավարության սահմանած հաշվառման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:
- Բացի այդ, սահմանվել է, որ այն ինքնակամ կառույցները, որոնք Կադաստրի կոմիտե հաշվառման են ներկայացվել մինչև սույն փոփոխությունները սահմանված ժամկետների խախտմամբ, սակայն գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում արտացոլված են որպես ինքնակամ կառույց, համարվում են հաշվառված Կառավարության սահմանած կարգով՝ Կադաստրի կոմիտեի կողմից վերջինիս հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու դեպքում:

«Պետական տուրքի և պետական տուրքի համար կիրառված տույժերի համաներման մասին» ՀՕ-407-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 29.12.2025թ.)

- «Լիզենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 16-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ 2015-2019թթ. լիզենզավորման ենթակա գործունեության տեսակ էր համարվում ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացումը: Այս լիզենզիաների տրման համար պետական տուրքի դրույքաչափերը սահմանված էին «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ կետի 15.6-րդ ենթակետով, որն ուժը կորցրած է ճանաչվել 29.06.2019թ.-ից: Միաժամանակ, «Մի շարք վարչական իրավախախտումների և պետական տուրքի համար կիրառված տույժերի համաներման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիզենզիայի համար մինչև 2019 թվականի հունվարի 1-ը օրենքով նախատեսված պետական տուրքի գծով պարտավորություններ ունեցող անձինք ազատվել են պետական տուրքի չվճարման համար հաշվարկված տույժերի վճարումից, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, մարել են պետական տուրքի մայր գումարը (օրենքն ուժի մեջ է մտել 11.07.2019թ.): Նշված համաներման արդյունքում պետական տուրքի պարտավորություններ չեն մարվել:
- ՀՕ-407-Ն օրենքով արդեն համաներումը սահմանվել է ինչպես վերոնշյալ պետական տուրքի գումարների, այնպես էլ սահմանված ժամկետում դրանց չվճարման համար հաշվարկված տույժերի գծով պարտավորությունների վրա:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-412-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 02.01.2026թ.)

- Սահմանվում են Անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրերին առաջադրվող պահանջները:
- Մանրամասն սահմանվում է «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգ մուտք գործած անձանց կողմից «Անձնական գրասենյակ» բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրերից ծագող իրավունքների ինքնաշխատ եղանակով պետական գրանցման իրականացումը:

«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-482-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-483-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Օրենքներով նախատեսվում է սահմանել պետական նպաստի նոր տեսակ՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը, որի իրավունքը ունեն ընտանիքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծնողներից մեկը կամ որդեգրողը, եթե նա ՀՀ քաղաքացի է, չի լրացել երեխայի 6 տարեկանը, և երեխան ու նրա կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները՝
 1. չունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ,
 2. չեն գտնվում սոցիալական պաշտպանության հաստատությունում:
- Փոփոխություններ են նախատեսվում նաև երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքի շրջանակներում:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-408-Ն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-409-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 29.12.2025թ.)

- Կաբոտաժային փոխադրումներ են համարվում որևէ այլ պետությունում հաշվառված տրանսպորտային միջոցով այլ պետության փոխադրողի կողմից ՀՀ տարածքում տեղաբաշխված երկու կետերի միջև իրականացվող փոխադրումները, որոնք «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքով արգելվում են, բացառությամբ միջազգային համաձայնագրերով սահմանված դեպքերի: Փոփոխություններով սահմանվում է, որ ԵՏՄ անդամ պետությունների փոխադրողների կողմից ՀՀ տարածքում կարող են իրականացվել կաբոտաժային փոխադրումներ միայն ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումն ավարտելուց հետո՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:
- Միաժամանակ, նախատեսվում է, որ որևէ այլ պետությունում հաշվառված տրանսպորտային միջոցով միջազգային համաձայնագրերով չսահմանված դեպքերում կաբոտաժային փոխադրումների իրականացումը կամ ԵՏՄ անդամ պետությունների փոխադրողների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ կաբոտաժային փոխադրումների իրականացումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

«Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-410-Ն, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-411-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Օրենքի ընդունմամբ կվերացվի ՀՀ զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը:

«Պետական պարտքի մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-484-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 08.01.2026թ.)

- Օրենքն ամբողջությամբ նոր խմբագրությամբ շարադրելու նպատակն է արդիականացնել ոլորտի կարգավորումները: Ի թիվս այլնի, նախատեսվում է վերանայել «պետական պարտք» հասկացությունը, սահմանել «հանրային հատվածի պարտք» հասկացությունը, ամրագրել պետական արտարժութային պարտատոմսերի թողարկման հստակ լիազորություն՝ այն վերապահելով լիազոր մարմնին, նախատեսել փոխառությունների տարեկան ծրագրի մշակման և հրապարակման օրենսդրական պահանջ, և այլն:

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Արաբական միացյալ էմիրությունների ներքին գործերի նախարարության կողմից տրամադրվող վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման և փոխանակման մասին» փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու մասին ՀՕ-402-Ն (ընդունված՝ 16.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Հուշագիրը կկարգավորի ՀՀ և ԱՄԷ վարորդական վկայականների հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես՝
 1. Հուշագրի կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է մյուս կողմի կողմից այն քաղաքացիներին տրամադրված վավեր վարորդական վկայականը, որոնք ժամանում են ոչ բնակության նպատակով՝ պայմանով, որ վարորդական վկայականի տնօրինողը բավարարում է վարորդական վկայականների տարբեր կարգերի կապակցությամբ մյուս կողմի սահմանած նվազագույն տարիքի հետ կապված պահանջները:
 2. Բնակության նպատակով ժամանող քաղաքացիների դեպքում հուշագրի յուրաքանչյուր կողմ մյուս կողմի տրամադրած վարորդական վկայականի փոխանակման համար դիմող անձին ազատում է դրա հետ կապված տեսական և գործնական քննություններից:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-490-Ն, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-491-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Փոփոխության է ենթարկվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների պահեստագործից, զինված ուժերից և այլ զորքերից ու այլ մարմիններից ազգային անվտանգության մարմիններ ծառայության ընդունված (տեղափոխված) և սպայական պաշտոնի նշանակված ծառայողներին հերթական կոչման ներկայացնելու կարգը: Նախատեսվել է նաև, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում և հատուկ ստորաբաժանումներում ծառայության կարող է անցնել նաև այն քաղաքացին, որը դատապարտվել է անզգույշ հանցանք կատարելու համար, և որի դատվածությունը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

«Ոստիկանության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-492-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 15.02.2026թ.)

- Օրենսդրական փաթեթով նախատեսվում է ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում Օպերատիվ կառավարման գրասենյակի ստեղծում: Արդյունքում տարբեր իրավախախտումների, արտակարգ իրավիճակների և պատահարների վերաբերյալ ահազանգերը քաղաքացիներից կընդունվեն և կսպասարկվեն միատեսակ մոտեցմամբ: Ահազանգերի ընդունման համար կգործարկվի «112» հեռախոսահամարը, որի ներքո կմիավորվեն երկու մարմինների՝ Ոստիկանության և Փրկարար ծառայության հեռախոսահամարները («1-02», «1-01», «911»):

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-496-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Օրենսդրական փաթեթով չվճարված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմի ներդրման ժամկետները 2026թ. հունվարի 1-ից տեղափոխվել է մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը:

«Կատարողական վարույթի մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-507-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 30.12.2025թ.)

- Նախատեսվում է երկարաձգել էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման դիմում ներկայացնելու համակարգի ներդրման ժամկետը մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը: Նախատեսվում է նաև հստակ սահմանել, որ օրենքի կարգավորումները կատարողական ծախսերի հատուցման և կատարողական վճարների գանձման կանոնների մասով կիրառելի են միայն նոր հարուցված կատարողական վարույթների նկատմամբ:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-406-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 29.12.2025թ.)

- Այսուհետ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են նաև հայցվորները, որոնք ներկայացրել են Քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով նախատեսված՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ հայց, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգման հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայց:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան - Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ + հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին ՀՕ-401-Ն (ընդունված՝ 16.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Ֆինանսական պայմանագրով սահմանվում է, որ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 50,000,000 եվրո: Նպատակն է Սյունիքի մարզում ապահովել թիրախային աջակցություն բազմաոլորտ ներդրումների միջոցով՝ արձագանքելով վերջին հակամարտությունների հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրներին:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-404-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Փոփոխություններով այլևս չի նախատեսվի վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի տարիքային սահմանափակում տղամարդկանց համար և կանանց համար:

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-517-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է, որ Սպասարկման կենտրոնի (գործակալության բաժինը, որն իրականացնում է օրենքով սահմանված կարգով քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառնությունների կատարման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը, դիմումների ընդունումը և փաստաթղթերի տրամադրումը) աշխատակիցները այսուհետ հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործակալության սպասարկման կենտրոններին վերապահված գործառնություններն իրականացնող համայնքային ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը:

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-398-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 11.12.2025թ.)

- Արձանագրության նպատակն է ապահովել համագործակցության ավելի արդյունավետ կազմակերպում և բարձրացնել խորհրդի աշխատանքի թափանցիկությունը: Հիմնական փոփոխությունները և լրացումները վերաբերում են հետևյալին՝
 1. խորհրդի գործառնությունների հստակեցում և կառուցակարգի բարելավում,
 2. քարտուղարության դերի և լիազորությունների հստակեցում,
 3. խորհրդի նիստերի կազմակերպման և ֆինանսավորման կարգի սահմանում:

«Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (thrive) ծրագրի վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՕ-403-Ն (ընդունված՝ 16.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Ծրագիրը նպատակ ունի զարգացնել կայուն և ներառական բնակարանային համակարգ Հայաստանում՝ աջակցելով փախստականների սոցիալ-տնտեսական ինտեգրմանը և բարեկեցությանը: Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է Ասիական Զարգացման Բանկի և Արտոնյալ ֆինանսավորման գլոբալ գործիքի հիմնադրամի (GCFF) միջոցներով:

«Բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական ծրագրերով անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-399-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 11.12.2025թ.)

- Համաձայնագրի նպատակներից են բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերով մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստման կազմակերպումը, շահագրգիռ կրթական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացման աջակցումը: Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է մաքսային մարմինների աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացում՝ մաքսային գործի ոլորտում առաջատար փորձի ուսումնասիրմանն ուղղված միջոցառումներ կազմակերպելու միջոցով:

«Եվրասիական տրանսպորտային միջանցքներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սոնիների բեռնվածքի և եզրաչափերի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-400-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 11.12.2025թ.)

- Համաձայնագրով սահմանվում են Եվրասիական տրանսպորտային միջանցքներում և երթուղիներում ներառված անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածները, սոնիներով բեռնվածությունն ու չափսերը: Համաձայնագրի կիրարկմամբ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելիս անդամ պետությունները պետք է ձգտեն ապահովել, որպեսզի տրանսպորտային միջոցների չափսերն ու զանգվածներն, ինչպես նաև մեկ սոնու կամ սոնիների խմբի զանգվածները չզերազանցեն Համաձայնագրով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված արժեքները:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ջրոսաշրջային ավտոբուսների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը, չափորոշիչները, որակավորման վկայականի ու նշանի ձևերը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը, որակավորման դադարման հիմքերը սահմանելու մասին (N 1765-Ն, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 01.04.2026թ.)

- Որոշման համաձայն՝ Ջրոսաշրջային ուղևորափոխադրողները Ջրոսաշրջային ավտոբուսի որակավորման հավաստագիր ստանալու համար պարտավոր են ներկայացնել էլեկտրոնային հայտ՝ ուղղված պետական լիազոր մարմնին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ջրոսաշրջության կոմիտեին: Որակավորման պահանջներին համապատասխանությունը պետք է ստուգվի Ջրոսաշրջության կոմիտեի կողմից ստեղծված մասնագիտական հանձնաժողովի կողմից:

Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության կարգը հաստատելու մասին (N 1745-Ն, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 06.12.2025թ.)

- Որոշման դրույթները վերաբերում են բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննման գործընթացին: Նախագծով սահմանվում է, որ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտ հանդիսացող շենքերի դեպքում պարտադիր պահանջ է զուգահեռաբար իրականացնել սկզբնական և գործիքային հետազննություն, որպեսզի ապահովվի շենքի տեխնիկական վիճակի ամբողջական և ճշգրիտ գնահատումը:
- Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննման իրականացումը վերապահվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք ունեն համապատասխան գործունեության լիցենզիա:
- Որոշման մեջ ընդգրկված կարգավորումները ներառում են նաև այլ կարևոր բաղադրիչներ, այդ թվում՝ շենքերի կառուցվածքային տարրերի վնասվածության աստիճանի գնահատում, վերակառուցման տեխնիկական միջամտությունների տեսակների նկարագրություն, տարբեր նշանակության օբյեկտների շենքերի տեխնիկական հետազննության պարտադիր պայմանների սահմանում, անվտանգության և շահագործման պիտանելիության գնահատման չափանիշներ և այլն, որոնք միտված են ոլորտի իրավական և մասնագիտական կարգավորման ապահովմանը:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1822-Ն, ընդունված 11.12.2025թ., ուժի մեջ՝ 13.12.2025թ.)

- Որոշման փոփոխություններով կտարանջատվեն պետական շարժական և անշարժ գույքի վաճառքի հետ կապված ընթացակարգերը: Մասնավորապես՝ առանձին կարգավորում կստանան մեկնարկային գնի որոշման, ինչպես նաև գույքը չվաճառվելու դեպքում այն համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ իջեցնելու հետ կապված իրավահարաբերությունները, ինչը կնպաստի պետական գույքի վաճառքի գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:
- Մրցույթի կամ աճուրդի հրապարակային ծանուցման և դրանց անցկացման միջև կսահմանվեն ավելի երկար ժամկետներ:
- Միաժամանակ, նախատեսվում է, որ եթե գույքը չվաճառվի գնահատված արժեքով, ապա մեկնարկային գնի իջեցումը կբերի շուկայական պահանջարկի աճին և, հետևաբար, վաճառքի իրականացման հավանականության բարձրացմանը:

Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները հաստատելու մասին (N 1943-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.12.2024թ. ՀՕ-491-Ն օրենքի 4-րդ հոդվածով Կառավարությանը լիազորվել է հաստատելու դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները: Ներկայումս դրոշմավորման ծածկագրերը տրամադրվում են յուրաքանչյուրը 3.5 դրամ (առանց ԱԱՀ) արժեքով: Դրոշմավորման յուրաքանչյուր ծածկագրի տրամադրման համար գինը հաստատվում է 2.5 դրամ (առանց ԱԱՀ), որը նախատեսվում է կիրառել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ներկայացված՝ դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա տրամադրվող դրոշմավորման ծածկագրերի նկատմամբ:
- Միաժամանակ, դրոշմավորման ծածկագրերի որոշակի քանակի նկատմամբ գինը հաստատվում է 0.01 դրամի (առանց ԱԱՀ) չափով: Նշված գինը կիրառվում է հարկ վճարողի՝ ներկայացված դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ տրամադրված դրոշմավորման ծածկագրերի քանակի և 2.5-ի հարաբերության արդյունքում ստացված քանակի նկատմամբ: 2028թ. դեկտեմբերի 31-ից հետո նոր գին հաստատված չլինելու դեպքում մինչև դրա հաստատումը շարունակվում է կիրառվել որոշմամբ հաստատված 2.5 դրամ (առանց ԱԱՀ-ի) գինը:

ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 1915-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- Որոշմամբ սահմանվում է, որ հաշվառումը փոխել ցանկացող անձինք հնարավորություն կստանան փաստացի բնականության վայրով հաշվառվելու՝ դիմելով առցանց հարթակի միջոցով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հաշվառումն իրականացվում է առաջին անգամ, և անձը չունի նույնականացում անցնելու հնարավորություն՝ նույնականացման քարտի կամ ժամանակավոր պաշտպանության վկայականի միջոցով, քանի որ օրենսդրությամբ նախատեսված է մերժման հիմք նույնականացման քարտ կամ ժամանակավոր պաշտպանության վկայական ստանալու համար, եթե անձը չունի հաշվառում:
- Որոշմամբ սահմանվում է նաև հարթակի միջոցով ներկայացված դիմումների կարգավիճակի վերաբերյալ դիմումատուներին պատշաճ ծանուցման կարգը, որի շրջանակում նախատեսվում է էլեկտրոնային փոստի հասցեի նշում՝ հետագա ծանուցումներն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին (N 1949-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 24.01.2026թ.)

- Որոշմամբ առաջարկվում է ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումը լրացնել դրույթով, համաձայն որի՝ ավտոցիստեռնի դեպքում՝ տեխնիկական զննություն անցկացնելու համար տրանսպորտային միջոցի տիրապետողը կամ սեփականատերը տեխնիկական զննության կայան պետք է ներկայացնի նաև ավտոցիստեռնի արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը և ամենամյա պարտադիր տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունը:

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1972-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.)

- Որոշումը նախատեսում է պարզեցնել և արագացնել հողամասերի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը: Համայնքի ղեկավարի կողմից Քաղաքաշինության կոմիտեի համաձայնեցմանը ներկայացվող առաջարկությունների փաստաթղթերի կազմն ու բովանդակությունը հստակեցվում է, ինչպես նաև սահմանվում է դրանց թվային հարթակում տրամադրման կարգը:

Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգերը հաստատելու մասին (N 1948-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- Որոշմամբ սահմանված վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը տարածվում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վրա՝ խոշոր (տարեկան շրջանառություն՝ 10+ միլիարդ դրամ), միջին (2-10 միլիարդ դրամ) և փոքր (2 միլիարդ դրամից պակաս):
- Վարկանիշավորումը կատարվում է չորս խմբով՝ ցածր, միջին, բարձր և բարձրագույն: Առաջին երեքը իրականացվելու են թվային համակարգի միջոցով՝ պետական և համայնքային գրանցամատյանների տվյալների հիման վրա, որին կփոխկապակցվեն տարբեր մարմիններում առկա տվյալները և դրանցից սահմանված միավորների հաշվարկով ձևավորվի գնահատականը: Բարձրագույն խմբի վարկանիշավորումն իրականացվելու է գնահատման հանձնաժողովի միջոցով՝ կամավորության սկզբունքով, միայն բարձր վարկանիշ ունեցող սուբյեկտների համար:
- Վարկանիշավորումը ներառում է կազմակերպության գործունեության բնութագրում՝ աշխատանքների ծավալ, կատարման ժամկետ, օգտագործված միջոցներ, նվազագույն ներուժի ապահովում, պատասխանատու անձի ներգրավվածություն, վարչական պատասխանատվություն և այլ բաղադրիչներ: Այն իրականացվելու է էլեկտրոնային համակարգով, ինչը նվազեցնում է մարդկային միջամտությունը, կրճատում թղթաբանությունը և արագացնում տվյալների հավաքումը:
- Մոնիթորինգը կիրականացվի լիցենզավորող մարմնի հրամանով՝ որակի գնահատման հանձնաժողովի և անհրաժեշտության դեպքում անկախ փորձագետների մասնակցությամբ, ներառյալ գործունեության վայրի այցելություններ: Հիմնական տվյալները ստացվում են լիցենզավորված անձի կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններից՝ urban.e-gov.am համակարգի միջոցով կամ արտակարգ դեպքերում թղթային տարբերակով: Հաշվետվությունները համակարգում ներբեռնվում են վարկանիշավորման գործընթացի համար:

«Արմենիան քարդ» ՓԲԸ-ի կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից կատարված անկանխիկ եղանակով վճարումներից հետվճար տրամադրելու միջոցառումը և կարգը հաստատելու մասին (N 1950-Լ, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2026թ.)

- Որոշմամբ հաստատվել է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից կատարված անկանխիկ եղանակով վճարումներից հետվճար տրամադրելու միջոցառումը կարգը: Անկանխիկ եղանակով վճարումներից «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց տրամադրվող հետվճարները հաշվարկվում և վճարվում են 2026 թվականի փետրվար ամսվանից սկսած մինչև 2027 թվականի հունվար ամիսը՝ ներառյալ, նախորդ ամսվա անկանխիկ գործառնությունների ծավալներից ելնելով:
- ԱՐՔԱ վճարային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից կատարված անկանխիկ եղանակով վճարումներից հետվճար տրամադրելու միջոցառումն ձևափոխված է, որ անկանխիկ գործարքի գումարի հետվճարի չափը կազմում է 2%, որը ձևավորվում է միջոցառման մասնակից գործընկեր «Արմենիան Քարդ» ՓԲԸ հատկացումներից՝ 1% և պետության կողմից 1% համամասնությամբ: Արմենիան Քարդ» ՓԲԸ հատկացումների նկատմամբ ծագող եկամտային հարկը ևս վճարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: 2026 թվականի դեկտեմբեր ամսվա հետվճարը հաշվարկվում և վճարվում է 2027 թվականի հունվար ամսին:

Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման պետական աջակցության փորձնական ծրագիրը հաստատելու մասին (N 1966-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.)

- Հայաստանում արհեստական բանականության (ԱԲ) ոլորտի ստարտափները, հետազոտական խմբերը և ուսումնական հաստատությունները ներկայում չունեն բավարար հասանելիություն բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսների՝ CPU, GPU, RAM և պահեստավորման ոլորտում, ինչը խոչընդոտում է նորարարությունների և կիրառական լուծումների ստեղծմանը: Պետական ֆինանսավորմամբ այս ռեսուրսների տրամադրումը տեխնիկական քայլի հետ միասին ռազմավարական նշանակություն ունի՝ նպաստելով տեխնոլոգիական առաջընթացին և ներառական տնտեսական աճին:

- 2025թ. հուլիսին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ստեղծել է Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտը (<https://ai.gov.am>), որը հանդիսանում է նորարարությունների և համագործակցության բաց հարթակ՝ ապահովելով HPC ռեսուրսների հասանելիություն, հայտերի ընդունում, դիմողների նույնականացում և ռեսուրսների վերահսկվող բաշխում: Արտադրության և հետազոտության համար անհրաժեշտ հիմնական բաղադրիչներն են՝ հաշվարկային ռեսուրսները, տաղանդավոր նորարարները և ԱԲ վարժեցման համար տվյալները:
- Ռեսուրսները տրամադրվում են AWS (Amazon Web Services) ընկերության միջոցով պետական սուբսիդիայի ձևով, որի միջոցով ծածկվում է օգտագործված ռեսուրսների 100%-ը, ինչպես նաև տրամադրվում է տեխնիկական և ճարտարապետական աջակցություն:

Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, այդ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին այդ դեղերի փոխհատուցման և հատկացման կարգը, ինչպես նաև առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում ապահովագրական փաթեթում ներառված դեղերի ծախսերի հատուցման կարգը, ապահովագրական փաթեթում ներառված դեղերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (N 1973-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 31.12.2025թ.)

- Որոշմամբ սահմանվում է բնակչության սոցիալական և հատուկ խմբերի, ինչպես նաև հիվանդությունների թարմացված ցանկերը, որոնց դեպքում դեղերը կտրամադրվեն լրիվ, մասնակի փոխհատուցմամբ կամ անվճար: Հստակեցվում են փոխհատուցման ֆինանսավորման մեխանիզմները պետական բյուջեի և առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում, և ներդրվում է դեղերի փոխհատուցման չափի հաշվարկման միասնական մեթոդաբանություն:
- Կարգավորվում են պետություն-դեղատներ պայմանագրային հարաբերությունները հրապարակային օֆերտայի միջոցով, իսկ շահառուներին տրվում է հնարավորություն դեղերը ձեռք բերել անմիջապես դեղատնից: Նախատեսվում է նաև մարզերում թմրամիջոց կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի շարունակական տրամադրումը ԱԱՊ համակարգով, իսկ որոշ հիվանդությունների դեպքում նախարարությունը կշարունակի կենտրոնացված գնումներով ապահովել անվճար դեղերի տրամադրումը

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին (N 1980-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ հաստատվում է հիմնադրամի և բժշկական կազմակերպությունների ու դեղատների միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը: Օրինակելի ձևը պարունակում է պայմանագրի առարկան, կողմերի իրավունքներն ու պարտավորությունները, ապահովագրված անձի իրավունքներն ու պարտականությունները, կողմերի պատասխանատվությունը, ֆորս-մաժորի դեպքում պարտավորությունների չկատարման հարցերը, ինչպես նաև փոխադարձ ծանուցման, կիրառելի օրենսդրության և վեճերի լուծման կարգերը: Կարգավորվում են նաև պայմանագրային այլ կարևոր հիմնահարցեր:

Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում «Առողջության համընդհանուր ապահովագրության» հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության» հիմնադրամի և դեղատների միջև պայմանագիր կնքելու ընթացակարգը, պայմանագիր կնքելու համար նախատեսված նվազագույն պահանջները հաստատելու մասին (N 1985-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ սահմանվում է պայմանագիր կնքելու նվազագույն պահանջներն ու ընթացակարգը բժշկական կազմակերպությունների և դեղատների միջև: Բժշկական կազմակերպությունները պարտադիր պետք է ունենան համապատասխան լիցենզիա, բավարարեն բուժօգնության համար անհրաժեշտ տեխնիկական, մասնագիտական, շենքային և սարքավորումների պայմաններին, և հետազոտություններ իրականացնելու հնարավորություն:
- Բացի այդ, պայմանագրի կնքմանը նախորդող 3 տարիների ստուգումներով չպետք է արձանագրված լինեն պայմանագրի կողմերի կողմից կոպիտ իրավական կամ էական պայմանագրային խախտումներ, իսկ կնքման պահին լիցենզիան չպետք է լինի կասեցված օրենքով սահմանված հիմքերով: Սահմանվում է նաև, որ կազմակերպությունը չպետք է լինի սնանկ, պետք է ունենա հաշվեկշռային շահույթ և չունենա հարկային ժամկետանց պարտքեր: Պահանջվում է նաև որակի և պացիենտների գոհունակության գնահատման համակարգերի առկայություն:

- Պայմանագիր կնքելու ընթացակարգը իրականացվում է հետևյալ փուլերով՝ Հիմնադրամը հրապարակում է օֆերտա, կազմակերպությունները ներկայացնում են ակցեպտ և անհրաժեշտ փաստաթղթեր, դրանք գնահատվում են, ընդունվում է պայմանագիր կնքելու կամ մերժելու որոշում, իսկ փոփոխությունների դեպքում ներկայացվում է նոր ակցեպտ: Կարգավորվում է նաև ակցեպտի ընդունման, մերժման և որոշման բողոքարկման կարգը:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1976-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Գործող կանոնակարգմամբ պացիենտի նույնականացումը կատարվում է միայն ՀԾՀ համարով, ինչը բավարար վերահսկողություն չի ապահովում ապահովագրության շրջանակում դեղերի բացթողման նկատմամբ:
- Որոշմամբ առաջարկվում է դեղատոմսերում կիրառել առողջության համընդհանուր ապահովագրության վկայագրի տվյալները, որպեսզի նույնականացումը լինի ավելի ճշգրիտ, նվազեն չարաշահումների և սխալ բացթողումների ռիսկերը, և դեղերի տրամադրումը լիովին համահունչ լինի ապահովագրության տեղեկատվական համակարգին:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1968-Լ, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.)

- Արտադրողականության խթանման նպատակային ծրագրով նախատեսված է վարկի/լիզինգի սուբսիդավորման ծրագիր, որի առումով կատարվել են հետևյալ փոփոխությունները.
 1. Ծրագրի գործողության ժամկետը 2025թ. դեկտեմբերի 31-ից երկարաձգվում է մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը.
 2. սահմանվում են սուբսիդավորման հայտերի ներկայացման հստակ ժամկետ և ձևաչափ,
 3. փոփոխվում են նաև ՀՀ դրամով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1418-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին (N 1941-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- Որոշմամբ սահմանվում է Սննդամթերքի անվտանգության, Շուկայի վերահսկողության, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինների և Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի լիազորությունների իրականացման նպատակով նշված մարմինների հասանելիության ապահովումը հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգին:

«Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին (N 1764-Ն, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 09.12.2025թ.)

• ԵՏՀ 2015 թվականի ապրիլի 21-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» N30 որոշման N14 հավելվածով հաստատված՝ թանկարժեք մետաղները և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները ԵՏՄ մաքսային տարածք ներմուծելու և ԵՏՄ մաքսային տարածքից արտահանելու մասին հիմնադրույթի 10-րդ կետի համաձայն՝ թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառումը չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային միջոցների մասին Արձանագրության՝ 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրի 7-րդ Հավելվածին համապատասխան՝ անդամ պետության կողմից միակողմանի կարգով ընդունվել է նշված ապրանքների մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման քանակական սահմանափակումներ կիրառելու վերաբերյալ որոշում: Այս դեպքում նշված ապրանքների նկատմամբ մաքսային տարածքից դուրս վերամշակում մաքսային ընթացակարգի կիրառումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնին պետական վերահսկողության ակտ ներկայացնելու դեպքում Հիմք ընդունելով վերոնշյալը, Կառավարությունը սահմանում է 6 ամսյա քվոտա՝ «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանից երրորդ երկրներ արտահանվող այն թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ՝

1. թանկարժեք մետաղներ կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղներ (7108-ից, 7109 00 000 0, 7110, 71 11 00 000 0) 300 կգ,
 2. թանկարժեք մետաղներ կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղներ (7106-ից 7107 00 000 0) 1250 կգ:
- Քվոտան պետք է ԱՏԳ մասնակիցների միջև բաշխվի այնպես, որ որ յուրաքանչյուր մասնակցի կողմից հայցվող մասնաբաժինը չզերազանցի ընդհանուր սահմանված քվոտայի 20%-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1967-Լ, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.)

- Կարգավորման նպատակն է երկարաձգել այգեհիմնման պետական աջակցության ծրագրի գործողության ժամկետը, խթանել բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրումը և հստակեցնել ծրագրի պայմանները: Մասնավորապես սահմանվում են պահանջներ տնկիների կաշողականության, ոռոգման, լարասյունային և կարկտապաշտպան համակարգերի, ինչպես նաև նռան, թզի, պիստակի, ընկույզի տնկանյութի նկատմամբ:
- Որոշմամբ առաջարկվում է.
 1. Ծրագրի ժամկետի երկարաձգում՝ մինչև 2026թ. ներառյալ,
 2. Նոր ինտենսիվ այգիների հիմնման, առաջադիմական ոռոգման համակարգերի, կարկտապաշտպան ցանցերի և ջրավազանների կառուցման պետական աջակցության հնարավորություն,
 3. Այգեհիմնման բաղադրիչով տոկոսադրույքների սուբսիդավորման նվազեցում՝ 9%-ից 7% (արտարժույթի դեպքում՝ 5%-ից 3%), քանի որ թիրախային ցուցանիշներն արդեն ապահովվել են,
 4. Արտոնյալ խմբերի համար սուբսիդավորման նոր չափեր՝ 14%-ի փոխարեն՝ 10%, 8% կամ 8%+1%՝ ըստ խմբի (սահմանամերձ համայնքներ, երիտասարդներ 18–35, 63+ տարի և այլն), ժողովրդագրական քաղաքականության նպատակներին համապատասխան:
- Սահմանվում է, որ այգեհիմնումից հետո պայմանագրի գործողության ընթացքում պետք է ապահովվի տնկիների առնվազն 75% կաշողականություն: Եթե առաջին մոնիթորինգի ժամանակ այն կազմում է 50–75%, նախարարությունը մեկ անգամ կարող է տրամադրել մինչև 8 ամիս ժամկետ՝ նվազագույն 75% ցուցանիշին հասնելու համար: Չապահովելու դեպքում դա կդիտարկվի որպես ծրագրի պայմանների խախտում՝ բացասական մոնիթորինգի հիմքով:

Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին (N 1797-Ն, ընդունված 11.12.2025թ., ուժի մեջ՝ 05.01.2026թ.)

- Ներկայացվող որոշմամբ առաջարկվում է երկարաձգել Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման արգելքը ևս 6 ամիս ժամկետով՝ 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 2026 թվականի հուլիսի 5-ը ներառյալ:

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2026 թվականի ընթացքում սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին (N 1971-Ն, ընդունված 25.12.2025թ.)

- Որոշմամբ առաջարկվում է ապահովել 2026 թվականին ՀՀ-ի համար սահմանված էլեկտրաշարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման սակագնային քվոտայի 15,000 հատ չափաքանակի ներմուծումը՝ մաքսատուրքի 0% դրույքաչափով: Քվոտան բաշխվում է հետևյալ կերպ.
 1. Մինչև 12,000 հատ՝ ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին և ոչ-դիլեր ներմուծող իրավաբանական անձանց (առանց ավտոարտադրողի հետ դիլեր/դիստրիբյուտոր պայմանագրի),
 2. Մինչև 3,000 հատ՝ անմիջապես ավտոարտադրողի հետ դիլերական-դիստրիբյուտոր պայմանագիր ունեցող ներմուծողներին՝ գործարանային և ծրագրային սպասարկման պարտավորությունը, ինչպես նաև փակ սպասարկման կայանի առկայությունը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
- Սուբսիդավորված խմբերը չեն կարող միաժամանակ օգտվել երկու ենթակետերով նախատեսված սակագնային արտոնություններից: Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի N 111 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, բայց ոչ շուտ, քան 2026 թվականի հունվարի 1-ը: Որոշումը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի N 111 որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ներմուծվող, ինչպես նաև մինչև այդ ներմուծված (այդ թվում՝ 2025 թվականի ընթացքում) և «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով կամ, որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց, ազատ շրջանառության համար չձևակերպված ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին (N 1736-Ն, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 22.01.2026թ.)

- Կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի N873-Ն որոշմամբ ժամանակավոր (6 ամիս ժամկետով) սահմանափակումներ են կիրառվել ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2523100000, 2523210000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ցեմենտի ներմուծման վրա, մասնավորապես՝ «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է լիցենզիաների հիման վրա: Նպատակ ունենալով շարունակական դարձնել պետության կողմից տեղական արտադրության զարգացումը խթանող միջոցառումները՝ կշարունակվի երրորդ երկրներից ներմուծվող ցեմենտի լիցենզավորման գործընթացը և 26.06.2025թ. N873-Ն որոշման գործողության ժամկետն ավարտվելուց հետո՝ կսահմանվի ցեմենտի ներմուծման լիցենզավորման նոր վեցամսյա ժամկետ 2026թ. հունվարի 22-ից մինչև հուլիսի 22-ը:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող՝ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվածային տոկոս կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների՝ առանց հակագնազգման տուրքի վճարման ՀՀ տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 1876-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 1868-Ն, ընդունված 18.12.2025թ., ուժի մեջ՝ 20.12.2025թ.)

- Որոշմամբ ԵՏՀ կոլեգիայի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 96 որոշման 5-րդ կետով նախատեսված՝ հակագնազգման տուրքի վճարումից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվածային տոկոս կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերը և պատրաստուկները (բացառությամբ որոշման 2-րդ հավելվածում թվարկված գունանյութերի տեսակների)՝ տարեկան 250 տոննա ծավալով: Որոշումն ուժի մեջ է մտնում 20.12.2025թ.-ից, գործում է 5 տարի ժամկետով, և դրա գործողությունը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 16-ից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով գրանցված մաքսային հայտարարագրերի նկատմամբ:

Շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին (N 1975-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- Շինարարության ոլորտում կապիտալ ներդրումների կամ շինմոնտաժային աշխատանքների (նախահաշվային) արժեքի հաշվարկման հիմքում հիմնականում դիտարկվել են խորհրդային տարիներին հաստատված ելակետային (բազային) տվյալներն ու դրանց պարբերաբար ինդեքսավորման սկզբունքը: Կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մեթոդաբանությամբ սահմանված բանաձևերը փոխկապակցված են 1984թ. գնացուցակների և դրանց նկատմամբ կիրառվող ինդեքսների ու ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հետ, որոնք արդիականացման կարիք ունեն: Նախահաշվային փաստաթղթերի մշակման հիմքում դիտարկվում է բազիսաինդեքսային (այն է՝ ոլորտում գործող նորմատիվ ակտերով սահմանված նախահաշվի կազմման) մեթոդը, որը չի համապատասխանում մրցակցային շուկայում գործող առաջարկ-պահանջարկ սկզբունքին:
- Որոշմամբ բազիսաինդեքսային մեթոդից անցում է կատարվում շինարարության ռեսուրսային հաշվարկի մեթոդաբանությանը՝ ընթացիկ գներով նախահաշվային արժեքը որոշելու համար, ստեղծելով մոնիթորինգային կենտրոններ և թվային բազային տվյալների շտեմարան, ինչպես նաև կիրառելով BIM ինֆորմացիոն մոդելը: Միջին և վերջնական արդյունքների ապահովման համար պահանջվելու են որոշակի ֆինանսական միջոցներ, իսկ միջոցառումների ծրագիրը նախատեսված է 2026–2028 թթ. համար:

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2106-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 1965-Ն, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 27.12.2025թ.)

- Որոշումը նախատեսում է արդիականացնել քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների լիցենզավորման գործընթացը, մասնավորապես՝ ներառելով նոր ենթատեսակ՝ ինժեներական գեոդեզիա: Այս ենթատեսակը տարածվում է շինարարության ընթացքում կատարվող գեոդեզիական աշխատանքների, շենքերի և կոնստրուկցիաների երկրաչափական պարամետրերի վերահսկման, ձևախախտումների և տեղափոխությունների մշտադիտարկման վրա, ինչպես նաև ինժեներատեխնիկական ցանցերի կառուցման ոլորտում: Մասնավորապես՝
 1. Լիցենզավորման ենթատեսակները համալրվում է նոր՝ ինժեներական գեոդեզիա ենթատեսակով, և պատասխանատու մասնագետների ընտրությունը իրականացվելու է ՀՀ կառավարության 2024 թ. հոկտեմբերի 31-ի N 1723-Ն որոշմամբ հաստատված գրանցամատյաններից:
 2. Լիցենզիայի և համապատասխան ներդրի տրամադրումը ամբողջությամբ թվայնացվելու է, ինչը վերացնում է դիմողի ֆիզիկական ներկայության անհրաժեշտությունը:
- Որոշմամբ նաև նախատեսվում է՝ ստեղծել նոր լիցենզավորող հանձնաժողով, որի կազմում ներգրավված կլինեն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից առաջադրված թեկնածուներ և կարգավորել որակավորման վկայականների տրամադրումը, գործընթացի վերահսկումը և թվայնացումը, ապահովելով միատեսակ, պարզ և արդյունավետ վարչարարություն:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1720-Ա, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 05.12.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ որպես ընդհանուր կանոն: Միաժամանակ սահմանվում է, որ կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ դատարանը կարող է որոշում կայացնել բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու մասին, եթե դա անհրաժեշտ է արդյունավետ քննության համար:
- Սահմանվում է, որ վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձինք կարող են ներկայացնել վերաքննիչ բողոքում կամ դրա պատասխանում, որով միաժամանակ սահմանվում է նաև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը դատական նիստում քննելու մասին որոշում կայացնելու ժամկետը՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո: Սահմանվում է վերաքննիչ բողոքների քննության ժամկետ, այն է՝ ողջամիտ ժամկետ, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

«Առևտրաարդյունաբերական պալատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1833-Ա, ընդունված 18.12.2025թ., ուժի մեջ՝ 19.12.2025թ.)

- Փաթեթով առաջարկվում է փոփոխել ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման կարգը՝ գործընթացը տեղափոխելով պետական կարգավորման դաշտ: Մասնավորապես՝
 1. Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման գործառույթը Առևտրաարդյունաբերական պալատից փոխանցվում է էկոնոմիկայի նախարարությանը,
 2. Ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննությունը սահմանվում է որպես ծանուցման ենթակա գործունեության տեսակ,
 3. Հավաստագրերի տրամադրման համար կգանձվի պետական տուրք:

«ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1717-Ա, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 05.12.2025թ.)

- Առաջարկվող փոփոխություններով ամրագրվում է դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը որպես վարչական դատավարության սկզբունք՝ նախատեսվում համաչափ սանկցիաներ, հստակեցվում են հայցադիմումի վերադարձի, կրկին ներկայացման, գործերի միացման, հայցից հրաժարվելու, հայցի ապահովման և վարչական ակտի կատարումը կասեցնելու կարգավորումները:
- Նախատեսվում է ավելի մանրամասն կարգավորել մի քանի հայցերով գործերի միացման և առանձնացման ընթացակարգը:
- Այն դեպքերում, երբ հայցվորը (դիմողը) դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, և ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու վերաբերյալ վարչական դատարանի մատնանշումից հետո հայցվորը (դիմողը) այն չի փոխարինել պատշաճ հայցատեսակով, դատարանը կկարողանա կիրառել արագացված դատաքննություն:
- Կարգավորվում են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթները, նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերի քննությունը, 5-ի փոխարեն, 3 դատավորի կազմով:
- Նախագծով նախատեսվում է, որ բոլոր դատական գործերը, այդ թվում՝ հայցադիմումը թղթային տարբերակով ներկայացած լինելու պարագայում, դառնալու են էլեկտրոնային՝ օրենսգրքով նախատեսված բացառությունների հաշվառմամբ:

«ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1780-Ս, ընդունված 11.12.2025թ., ուժի մեջ՝ 12.12.2025թ.)

- Նախատեսվում է քաղաքացիական և վարչական գործերի քննության համար սահմանել 6-ամսյա ուղենիշային ժամկետ: Դատարաններին հնարավորություն կտրվի երկարաձգել այդ ժամկետները միայն պատճառաբանված որոշմամբ և ոչ ավելի, քան երկու անգամ՝ հաշվի առնելով գործի բարդությունը, մասնակիցների վարքագիծը և այլ օբյեկտիվ հանգամանքներ:
- Հաշվի առնելով որոշ վարույթների առանձնահատուկ բարդությունն ու տևողությունը՝ առաջարկվում է ժամկետային սահմանափակումներից բացառություն անել սնանկության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով: Սնանկության վարույթում առկա գործիքակազմը արդեն իսկ նախատեսում է բազմամյա ժամկետներ, իսկ ապօրինի գույքի բռնագանձման դեպքում միայն նախնական ուսումնասիրության փուլը կարող է տևել մինչև 3 տարի: Ուստի, այս ոլորտներում նպատակահարմար է համարվում առաջնորդվել ողջամիտ ժամկետի ընդհանուր պահանջով:
- Դատական խնայողության սկզբունքի շրջանակներում առաջարկվում է վերացնել դատարանի հայեցողությունը՝ գործի քննությունն ընդհատման պահից շարունակելու կամ սկզբից սկսելու հարցում: Նոր կարգավորմամբ՝ գործի քննությունը պետք է շարունակվի ընդհատված կետից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմերի հիմնավոր միջնորդությամբ կորոշի վերսկսել այն սկզբից:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1838-Ս, ընդունված 18.12.2025թ., ուժի մեջ՝ 19.12.2025թ.)

- Առաջարկվում է հստակեցնել խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության գործընթացի իրավական հիմքերը և դրա արդյունքների բողոքարկման մեխանիզմները: Հիմնական փոփոխություններից մեկը բողոքարկման հստակ ժամկետների սահմանումն է, թե՛ խաղային օպերատորի ընտրության, թե՛ «Պետություն-մասնավոր համագործակցության» ընթացակարգերի դեպքում նախատեսվում է երկամսյա ժամկետ՝ որոշման կայացման կամ գործողության կատարման պահից:

- Անցումային դրույթներով ամրագրվում է. որ նախքան օրենքի ուժի մեջ մտնելը կայացված որոշումները բողոքարկել օրենքի ընդունումից հետո 2 ամսվա ընթացքում՝ դրանով իսկ երաշխավորելով շահագրգիռ անձանց դատական պաշտպանության իրավունքը:
- Նախատեսվում է, որ օպերատորի ընտրության հետ կապված իրավահարաբերությունները ընդդատյա են քաղաքացիական դատարանին:
- Բացի այդ, առաջարկվում է սահմանափակել հայցի ապահովման միջոցների կիրառումը: Մասնավորապես, մրցույթի արդյունքների դատական վիճարկումը չպետք է հիմք հանդիսանա ընթացակարգի կամ օպերատորի գործունեության կասեցման համար:
- Նախագծով հստակեցվում է, որ խաղային օպերատորի ընտրության և դրա արդյունքում կնքված գործարքների վրա չեն տարածվի «Գնումների մասին» օրենքի կարգավորումները:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքի նախագծերին հավանություն տալու մասին (N 1835-Ս, ընդունված 18.12.2025թ., ուժի մեջ՝ 19.12.2025թ.)

- Նախագծով գնահատողների աստիճանակարգում սահմանվում է գնահատողների եռամակարդակ համակարգ՝ կրտսեր, առաջատար և գլխավոր: Ըստ մասնագիտական փորձի և որակավորման՝ հստակեցվում է, թե որ խմբի մասնագետն ինչ տեսակի գույք գնահատելու իրավունք ունի:
- Ներդրվում է պատասխանատվության նոր մեխանիզմ. յուրաքանչյուր գնահատողի տարեկան տրվում է 20 միավոր: Մասնագիտական սխալների, թերացումների կամ փաստերի խեղաթյուրման դեպքում միավորները նվազեցվում են: Միավորների կորուստը ենթադրում է պարտադիր վերապատրաստում, իսկ սահմանաչափի սպառումը՝ որակավորման դադարեցում:
- Գնահատման գործընթացում ներգրավված ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է բացառապես էլեկտրոնային համակարգով՝ կենտրոնացված հաշվառման ծրագրի միջոցով: Ծանուցումները և պաշտոնական հաղորդակցությունը կատարվելու է համակարգի միջոցով, իսկ հաշվետվությունները կազմվելու և հաստատվելու են էլեկտրոնային եղանակով:

«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1732-Ա, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 05.12.2025թ.)

- նախատեսվում է, որ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերով հրավիրված գնումների դեպքում գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ որոշումների բողոքարկումը չի կասեցնի գնման գործընթացը՝ պայմանով, որ այդ մասին նշում առկա լինի հրավերում՝ Կառավարության նախնական համաձայնությամբ:
- Միաժամանակ սահմանվում է, որ գնումների հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտերի կատարումը չի կարող կասեցվել այդ ակտերի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքով:
- Բացի այդ, գնումների վեճերով կայացված վճիռների վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումները, բացառությամբ հաշտությամբ գործի ավարտի կամ վերաքննիչ բողոքից հրաժարվելու դեպքերի, կարող են բողոքարկվել վճռաբեկ կարգով դրանց հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին (N 1724-Ա, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 05.12.2025թ.)

- Պայմանավորված վերջին ՄԻԵԴ կայացրած որոշումներով՝ ՀՀ Արդարադատության նախարարության ներկայացրած փաթեթով առաջարկվում է կատարելագործել հանրության գերակա շահ ճանաչելու և դրա հիման վրա սեփականության օտարման կարգավորումները:
- Մասնավորապես, սահմանվում է հանրության գերակա շահ ճանաչելու որոշումների ընդունման մեթոդաբանություն, հստակեցվում են դրանց բովանդակային պահանջները, օտարման նպատակի իրագործման ժամկետները և ձեռքբերողի սուբյեկտը՝ որպես կանոն պետության մասնակցությամբ:
- Կատարելագործվում են օտարվող գույքի նկարագրության և գնահատման գործընթացները՝ նախատեսելով նոր տեխնիկական միջոցների կիրառություն:
- Սեփականատերերի համար նախատեսվում են խրախուսական մեխանիզմներ՝ կամավոր համաձայնության դեպքում փոխհատուցման չափի բարձրացումով (շուկայական արժեքից մինչև 30 տոկոս ավել):

- Հստակեցվում են Կառավարության՝ հանրության գերակա շահ ճանաչելու վերաբերյալ որոշումների վարչական դատարանում վիճարկման կարգը (5 դատավորի կազմով), ժամկետներն ու առանձնահատկությունները՝ միաժամանակ սահմանելով, որ կասեցումը կարող է կիրառվել միայն անդառնալի հետևանքների առկայության դեպքում:
- Նախատեսվում է նաև փոխհատուցման չափի դատարանում վիճարկման հատուկ հայցային վարույթ՝ ամբողջական դատավարական երաշխիքներով, սակայն առանց հանրության գերակա շահի իրագործումը կասեցնող հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորության:

«Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 1737-Ա, ընդունված 04.12.2025թ., ուժի մեջ՝ 05.12.2025թ.)

- Համաձայնագրի նպատակը Կողմերի միջև ապրանքների առևտրի ազատականացումն ու պարզեցումն է՝ սակագնային (մաքսատուրքերի նվազեցում/վերացում) և ոչ սակագնային խոչընդոտների (տեխնիկական, մաքսային, սանիտարական պահանջներ և այլն) նվազեցման միջոցով: Համաձայնագրի անբաժանելի մաս են ապրանքային ցանկերը, որոնց նկատմամբ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ՝
 1. գյուղատնտեսական՝ հանքային ջուր, պահածոյացված մրգեր/բանջարեղեն, հյութեր, ջեմեր,
 2. արդյունաբերական՝ պղնձի և ալյումինի արտադրանք, դեղամիջոցներ, ոսկերչական իրեր և համաձուլվածքներ:

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1913-Ա, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել այն նորմը, որով քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը կասեցվում էր:
- Գույքային բնույթի բոլոր հանցագործությունների (թե՛ հափշտակության, թե՛ կաշառք տալու) համար կգործեն չափերի միևնույն շեմերը:
- Ծանր հիվանդության հիմքով պատժի նշանակման հետաձգման դեպքում անչափահասների և մինչև 21 տարեկանների համար պետք է կիրառվեն իրենց համար օրենքով նախատեսված կրճատված վաղեմության ժամկետները, այլ ոչ թե ընդհանուր սահմանված ժամկետները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1928-Ա, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- նախագծով նախատեսվում են նոր և ավելի հստակ չափանիշներ տեսալսողական հաղորդումների չարաշահման վերաբերյալ: Լրացվում են ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստացած անձի գործունեության սահմանները:
- նոր կարգավորում է ստանում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեությունը՝ սահմանելով նրանց լիցենզիա ստանալու կարգը, դրա սահմանները, կասեցման և դադարեցման հիմքերը:
- նախատեսվում է, որ ցանցային օպերատորի կողմից առանց գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության մեկ տեսալսողական ծրագրի վերահաղորդում իրականացնելն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: Սահմանվում են նաև այլ տուգանքներ, որոնց սահմանաչափերը էապես փոփոխված են՝ հասնելով մինչև նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի:

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1917-Ա, ընդունված 25.12.2025թ., ուժի մեջ՝ 26.12.2025թ.)

- նախագծի հիմնական գաղափարը սահմանային անցման կետերում կուտակումների խնդիրը «թվային հերթերի» միջոցով լուծելն է: Քանի որ ներկայումս բեռնատարները սահմանին հասնում են անկանոն հոսքով, հաճախ առաջանում են երկարատև հերթեր, որոնք ոչ միայն խցանում են ճանապարհները, այլև տնտեսվարողների համար ստեղծում են լրացուցիչ ծախսեր ու ժամանակի կորուստ:
- Խնդրի կարգավորման համար առաջարկվում է սահմանամերձ գոտիներում ստեղծել հատուկ վճարովի կայանատեղիներ, որտեղ կգործի հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգ: Գործընթացը ենթադրում է, որ բեռնատարը նախ կայանում է այդ հատուկ տարածքում և գրանցվում էլեկտրոնային հերթում, ինչից հետո վարորդը ստանում է հստակ թույլտվություն՝ սահմանային անցման կետ մուտք գործելու համար միայն այն ժամանակ, երբ մաքսային գոտին իրականում պատրաստ է սպասարկմանը: Սա թույլ է տալիս մաքսային մարմիններին նախապես ստանալ բեռի և մեքենայի տվյալները, իրականացնել ռիսկերի գնահատում և կրճատել բուն սահմանի հատման ժամանակահատվածը:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1781-Ա, ընդունված 11.12.2025թ., ուժի մեջ՝ 12.12.2025թ.)

- էլեկտրոնային առևտրի կարգավորման նպատակով ԵՏՄ անդամ պետությունների կողմից ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» 25.12.2023թ. արձանագրությունը, որով նախատեսվել է կանոնակարգել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից էլեկտրոնային առևտրի շրջանակներում ձեռքբերված ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածք ներմուծման և հայտարարագրման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝
- էլեկտրոնային առևտրի ապրանքների հայտարարագրման նպատակով ներդրվում է էլեկտրոնային առևտրի օպերատորի ինստիտուտը, սահմանվում են օպերատորին ներկայացվող պահանջներն ու չափանիշները, օպերատորի գործունեության պայմանները.
- օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից անձանց կողմից ձեռք բերվող ապրանքների տարանջատում այլ ապրանքներից, այդ ապրանքների հայտարարագրման պարզեցված կարգավորումներ առանձին մաքսային ընթացակարգերով.
- էլեկտրոնային առևտրի ապրանքների մատակարարման երկու ուղղությունների առանձնացում՝
 1. ուղիղ մատակարարումներ (ֆիզիկական անձանց կողմից անմիջապես օտարերկրյա էլեկտրոնային հարթակներից ձեռքբերված ապրանքների ներմուծում և հայտարարագրում),
 2. էլեկտրոնային առևտրի օպերատորի միջոցով իրականացվող մատակարարումներ (էլեկտրոնային առևտրի օպերատորը էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպում է «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, որից հետո ապրանքները ձեռք են բերվում ֆիզիկական անձանց կողմից, ապրանքները առաքվում են ֆիզիկական անձանց հասցեով, «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ֆիզիկական անձանց օտարված էլեկտրոնային առևտրի ապրանքները ձևակերպվում են «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով՝ մինչև ֆիզիկական անձանց կողմից այդպիսի ապրանքների ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա 15-ը):

- Վերոնշյալ արձանագրությամբ մի շարք հարաբերությունների կարգավորումը վերապահվել է անդամ պետությունների ազգային օրենսդրությանը: Այդ նպատակով Կառավարության 11.12.2025թ. նիստում N1781-Ա որոշմամբ հավանություն է տրվել օրենքների փոփոխությունների նախագծերին:
- **«Մաքսային կարգավորման մասին» օրենքում տեղայնացվել են ազգային օրենսդրությանը վերապահված հետևյալ կարգավորումները՝**
 1. էլեկտրոնային առևտրի հայտարարագրի՝ մաքսային մարմինն ներկայացման ժամանակ հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ներկայացման դեպքերի սահմանում.
 2. էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ դրանց բացթողումից հետո առևտրային նպատակներով օգտագործման դեպքում անձանց պատասխանատվության սահմանում, առևտրային գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք կրում են հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն.
 3. չպահանջված՝ էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ ԵՏՄ մաքսային տարածքից արտահանման դեպքում դրանց փոխադրման կարգի սահմանում.
 4. մաքսային պահեստներում գտնվող էլեկտրոնային առևտրի ապրանքների ձեռքբերումներից հետո դրանց դուրսբերման և առաքման ժամանակ մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում.
 5. ֆիզիկական անձանց իրացված և առաքված ապրանքների վերադարձի և մաքսային պահեստներում տեղակայման նպատակներով մաքսային մարմնին ծանուցման կարգի սահմանում.
 6. մաքսային վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մաքսային մարմինների կողմից տույժերի գանձման, ծանուցումների ուղարկման, բռնագանձման միջոցների սահմանումը.
 7. էլեկտրոնային առևտրի ապրանքների արժեքի որոշման ժամանակ առանձին ընթացակարգային դրույթների սահմանում:

- **«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխությունները.**
- Հաշվի առնելով այն, որ արձանագրությամբ էլեկտրոնային առևտրի ապրանքները տարանջատվել են ապրանքների այլ կատեգորիաներից, սահմանվում են մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների համար պետական տուրքի դրույթաշափեր՝
 1. մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները նախատեսվում են տարածել նաև էլեկտրոնային առևտրի օպերատորի կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա,
 2. մեկ ուղեվորային մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար պետական տուրքի մասին դրույթները նախատեսվում են տարածել նաև ֆիզիկական անձանց կողմից մեկ էլեկտրոնային առևտրի հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների վրա:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ (ապօրինի հարստանալը) և 444-րդ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը) հոդվածներով նախատեսված արարքի սուբյեկտների շրջանակը («Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով փոխարինելով): Յուրաքանչյուր տեսակի հայտարարագիր չներկայացնելու կամ դրանում կեղծ տվյալներ ներկայացնելու, կամ ներկայացված տվյալը խեղաթյուրելու համար օրենսդիրը սահմանել է առանձին քրեական պատասխանատվություն: Հստակեցվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածով պատասխանատվությունը նախատեսված է ոչ թե առհասարակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր, այլ կոնկրետ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող հայտարարագրերի չներկայացնելու, դրանում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական պարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է սահմանել, որ ՀՀ-ում հաշվառված, սակայն «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող և ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից կատարված իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում է օտարերկրացի համարվող անձը, եթե օրենքով սահմանված կարգով ապացուցվում է, որ ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցներով արձանագրված իրավախախտումը կատարվել է «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող և ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից:

«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է օրենսդրական մակարդակում կարգավորել ՀՀ տարածքում տնային և թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված հարաբերությունները: Սահմանվում են կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի սկզբունքները, կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները, կենդանիների բուժման, ձեռնարկատիրական նպատակով կենդանիների վաճառքի պահանջները:

ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ գետերի վարարումների հետևանքով հեղեղումները կանխելու, ոռոգելի աղակալված հողերի վազման և ոռոգում կատարելու նպատակով՝ բացառապես ինքնահոս եղանակով հաշվառված և ոչ ջրամբարներից բաց թողնված ջուրը ջրօգտագործման թույլտվությամբ ջրօգտագործողներին մատակարարվում է անհատույց՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ մի շարք մարմիններում և կազմակերպություններում, օրինակ՝ հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր ունեցող ընկերություններում:

«Օտարերկրացիների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենքների փոփոխությունների նախագծերի փաթեթով նպատակադրվել է թվայնացնել օտարերկրացիներին Հայաստանում կացության կարգավիճակների տրամադրման գործընթացը, կատարելագործել օտարերկրացիների հաշվառման վարչարարությունը, բարձրացնել դրա արդյունավետությունը, հստակեցնել կացության կարգավիճակների տեսակներն ու կացության կարգավիճակ տալու վարույթի իրականացման մեխանիզմները: Հաշվի առնելով աշխատանքային միգրացիոն հոսքերի ակտիվությունը և դրա կանոնակարգման անհրաժեշտությունը, փոփոխություններով առաջարկվում է, մասնավորապես`
 1. հրաժարվել աշխատանքի թույլտվության, հետևաբար՝ նաև դրա բացառությունների համակարգից, փոխարենը որպես ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմք սահմանելով աշխատանքային վիզայի, աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանում գտնվելու (բնակվելու) թույլտվության առկայությունը, միաժամանակ սահմանելով առանց աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելու իրավունք ունեցող օտարերկրացիների շրջանակը,
 2. սահմանել աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության հասկացությունը՝ նպատակ ունենալով իրականացնել Հայաստանում օրինական գտնվելու ժամկետում աշխատել ցանկացող օտարերկրացիների հաշվառում,
 3. սահմանել քվոտայի հասկացությունը, որը թույլ կտա Կառավարությանը կարգավորել օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող կացության կարգավիճակների սահմանաչափն՝ ըստ կացության կարգավիճակների տեսակի, քանակի և հիմքերի,
 4. հստակեցնել ներդրումներ իրականացնելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրություն ունեցող օտարերկրացիների օրինական կացության կազմակերպման գործընթացը: Գործող կարգավորումներով օտարերկրյա քաղաքացիները կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացնելու հիմքով կացության կարգավիճակի դիմում ներկայացնելու համար գումարի որևէ շեմ սահմանված չէ, առաջարկվում է սահմանել համապատասխան շեմ ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունումը միտված է Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության զարգացմանը՝ այն դարձնելով առավել մրցունակ, թափանցիկ և միջազգային չափանիշներին համապատասխանող: Առաջարկվող կարգավորումները հնարավորություն կտան Հայաստանի Հանրապետությանը ներգրավվել միջազգային գնահատման շուկայում և ստեղծել այնպիսի համակարգ, որն ապահովում է բարձր որակի, վստահելի և ներդրումներին նպաստող ծառայությունների մատուցում: Մասնավորապես, նախատեսվում է սահմանել իրավունքեր, պարտականություններ և սահմանափակումներ ինչպես օրենքի իմաստով ծառայություններ մատուցողների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության որակավորված գնահատողների և գնահատման կազմակերպությունների համար:
 - Նաև, կատարվում են փոփոխություններ հաշվառման ծրագրի կիրառման կարգում, սահմանվում են նոր իրավասություններ Կադաստրի կոմիտեի համար՝ որպես գնահատման գործունեության ոլորտը կարգավորող, վերահսկող և որակավորում իրականացնող լիազոր մարմնի:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է ռեաբիլիտացիայի իրական հնարավորություն այն անձանց համար, ովքեր օրենքով չնախատեսված լինելով հանդերձ ներգրավվել են քրեական գործընթացների մեջ՝ քրեական պատասխանատվությամբ համար նախատեսված տարիքային շեմին չհասնելու պայմաններում: Փոփոխություններ են նախատեսվում նաև խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու կառուցակարգերում:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

ՀՀ հարկային օրենսգրքի գործող կարգավորումներին համապատասխան՝ ՀԴՄ-ի կիրառությունը պարտադիր է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) առևտրի օբյեկտների, շրջիկ առևտրի կետերի, առևտրի իրականացման վայրերում վաճառատների միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս: Էլեկտրոնային ՀԴՄ-ն կարող է կիրառվել կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով, իսկ դրա կիրառությունը պարտադիր է միայն էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում: Տեխնոլոգիական զարգացմանը և թվային ծառայությունների աճին զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառության ոլորտները, այն դարձնել սովորական ՀԴՄ-ին այլընտրանքային գործիք: Միաժամանակ, ՀԴՄ կիրառող անձանց շրջանակը և հիմնական ընթացակարգերը նախատեսվում է սահմանել Կառավարության կողմից:

«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

ՀՀ հարկային օրենսգրքով ճանապարհային հարկով հարկման օբյեկտներ է համարվում ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելը:

Ճանապարհային հարկը գանձում են մաքսային մարմինները՝ հանրապետություն մուտք գործելու յուրաքանչյուր 15 օրվա համար: Ճանապարհային հարկի մեծությունը կախված է մեքենայի բեռնատարողությունից: Հարկային օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված են ճանապարհային հարկի արտոնությունները, որով սակայն արտոնություններ նախատեսված չեն Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության «BSEC Permit» համակարգի և Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) թույլտվությունների հիման վրա իրականացվող բեռնափոխադրումների դեպքում: Այնինչ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության «BSEC Permit» համակարգի և Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) թույլտվությունների համակարգում հայկական բեռնափոխադրումներ իրականացնողների նկատմամբ անդամ-պետություններում կիրառվում են արտոնությունները: Նշված հարցի լուծման նպատակով առաջարկվում է ճանապարհային հարկի մասով սահմանել համապատասխան արտոնություն:

Շնորհակալություն